ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 72
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

16-ը մարտի 2024թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Ա. Հ. Մակարյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և նշեց, որ անհրաժեշտ է ավելացնել օրակարգում ավելացնել ևս մեկ հարց՝ «7.3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. նոյեմբերի 26-ի նիստի թիվ 63/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը նոր խմբագրությամբ հաստատելու և մրցույթը մեկնարկելու մասին» հարցը, որը, կապված է ԵՊՀ ԻՄ-ում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման անհրաժեշտությամբ: Այնուհետև Ա. Մակարյանը քվեարկության դրեց նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:

   (զեկ.՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյան**):
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2024թ. խնդիրների մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը հաստատելու մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան**)
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024-2025 ուստարվա ընդունելության ուսման վարձավճարների չափերը հաստատելու մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024-2025 ուստարվա ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների հաստատելու մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)
6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և կառույցների ու կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման» կարգը հաստատելու մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան**)

7. Ընթացիկ հարցեր։

7.1. ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Սիրանուշ Արտակի Աբազյանին ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական գիտական ընկերության նախագահի պաշտոնում հաստատելու մասին։

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ նախագահ **Ա. Թիրաբյան**)

7.2. «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի ծրագրերի ներկայացում։

(Զեկուցող՝ «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի ծրագրերի համակարգողներ **Ս. Պետրոսյան, Է.Գրիգորյան**)

7.3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. նոյեմբերի 26-ի նիստի թիվ 63/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը նոր խմբագրությամբ հաստատելու և մրցույթը մեկնարկելու մասին»

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**.

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը։

<u>Օրակարգի առաջին</u> **՝** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին » հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյանի** հաղորդումը։

Մ. Աթոյանը նշեց, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը կազմվել է հաշվի առնելով ԵՊՀ ԻՄ նախորդ տարվա ժամանակացույցը, ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագիրը, ընդգրկվել են նաև ստորաբաժանումների ղեկավարների և գիտական խորհրդի անդամների կողմից ներկայացված հարցեր՝ մասնավորապես առաջարկներ են ստացվել ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի կողմից։

Նիստերի ժամանակացույցը ամբողջական կարող եք տեսնել **հավելված 1-ում։**

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մակարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք։

Արտահայտվողները առաջարկեցին ներկայացված տարբերակով հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը։

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 72/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-

րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի երկրորդ՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2024թ. խնդիրների մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Նա մասնավորապես նշեց, որ ԵՊՀ ԻՄ զարգացման՝ 2022-2026 թթ. ռազմավարական ծրագրի 3 նպատակների 19 խնդիրների 101 գործողությունների իրականացման համար մշակվել է մարտավարություն, որը ներառել է շուրջ 307 նպատակային քայլեր՝ 325 ակնկալվող ցուցիչներով: Այնուհետև Ա. Մակարյանը անդրադարձավ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2024թ.-ին նախատեսված առանցքային խնդիրներին, թե որքանով են իրականացվել և ինչ խնդիրներ կան դրանց իրականացման ճանապարհին: Նա մանրամասն ներկայացրեց յուրաքանչյուր ռազմավարական նպատակում առկա առանցքային խնդիրները(տես հավելված 2) և նրանց լուծման հնարավորությունները:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք:

Արտահայտվողները կարևորեցին կատարված աշխատանքները, դրանց վերլուծությունները ԵՊՀ ԻՄ հետագա գործունեության արդյունավետության բարձրացման գործում:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ

- ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2024թ.-ի խնդիրների մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյանի** հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի երրորդ՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ներկայացվել են 13 անվանական կրթաթոշակի հավակնորդներ, որից 11-ը ԵՊՀ ԻՄ բյուջեի հաշվին, իսկ 2-ը՝ արտաբյուջետային: Հարցը քննարկվել է նաև տնօրենության նիստում: Ֆակուլտետների գիտական խորհուրդներում քննարկվել են անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների թեկնածությունները: Արդյունքում, հաշվի առնելով ուսանողների առաջադիմությունը և ԵՊՀ ԻՄ գործող համապատասխան իրավական ակտերը ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն է

ներկայացվում 13 անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, որոնք համապատասխանում են պահանջվող չափանիշներին: Ցուցակը կարող եք տեսնել **հավելված 3-ում**:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Գ. Սիմոնյանը, ուսանողներ և այլք: Առաջարկվեց հաստատել ներկայացված ցուցակը:

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 72/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 8-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 8-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, համաձայն հավելված 3-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

<u>Օրակարգի չորրորդ՝</u> ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024-2025 ուստարվա ընդունելության ուսման վարձավճարների չափերը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Ա. Մակարյանը նշեց, որ հարցը քննարկվել է նաև ԵՊՀ ԻՄ տնօրենության նիստում, և որոշվել է առաջարկել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին ոչ մեծ չափով (հիմնականում 20 հազար ՀՀ դրամի չափով) փոփոխություններ կատարել ԵՊՀ ԻՄ՝ 2024-2025 ուստարվա ուսման վճարների չափերում (տես հավելված 4): Ա. Մակարյանը նշեց, որ վարձավճարների չափերը ճիշտ որոշելու համար կատարվել են նաև համեմատություններ ՀՀ այլ բուհերի վարձավճարների հետ, որի արդյունքում պարզ է դարձել, որ ԵՊՀ ԻՄ վարձավճարների չափերը մնում են ՀՀ-ում ամենացածրերից՝ որոշ մասնագիտություններով Մասնաճյուղի վարձավճարներից ցածր է միայն Շիրակի պետական համալսարանի որոշ ծրագրերի վարձավճարները: Ա. Մակարյանը նշեց նաև, որ Մասնաճյուղը ձգտում է մոտենալ ՀՀ կառավարության կողմից սահմանված միջին ուսման վարձավճարներին: Այնուհետև նշվեց, որ վարձավճարներից ամենացածրը «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի համար է, իսկ ամենաբարձրը՝ «Ֆինանսներ(ըստ ոլորտների)» կրթական ծրագրի համար:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը:

Նշվեց, որ Մասնաճյուղի հիմնական եկամուտը վարձավճարներն են, իսկ որակյալ կրթություն մատուցելու համար անհրաժեշտ են բավարար դրամական միջոցներ: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը նշեց, օրակարգի հաջորդ հինգերորդ հարցը՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024-2025 ուստարվա ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների հաստատելու մասին», որը սերտ առնչվում է այս հարցի հետ և ճիշտ կլինի միացնել այս հարցին:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 72/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 3-րդ և 6-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 3-րդ և 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024-2025 ուստարվա ընդունելության ուսման վարձավճարների չափերի նախագիծը՝ համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՈՐՈՇՈՒՄ N 72/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 6-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024-2025 ուստարվա ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների՝ համաձայն հավելված 5-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

<u>Օրակարգի վեցերորդ</u>՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և կառույցների ու կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման» կարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի հաղորդումը:

Մ. Ճաղարյանը նշեց, որ Մասնաճյուղի 2022-2026թթ. զարգացման ծրագրի Հ2.1 գործողությամբ (Նպատակ 3. Հանրային ներգրավվածություն, խնդիր 2. Համագործակցություն, գործողություն 1) պլանավորվել է մշակել ձեռնարկությունների հետ Մասնաճյուղի համագործակցության կարգ: ՄԿՈԱ բաժինը մշակել է կանոնակարգի նախագիծը, որը քննարկվել է Գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նիստում /31.10.2023թ./: Նա նշեց նաև, որ կանոնակարգը սահմանում է Մասնաճյուղի հետ ՀՀ-ում գործող պետական, մասնավոր և միջազգային ձեռնարկությունների, ընկերությունների ու կազմակերպությունների (այսուհետև՝ Շահակից կառույցնոր կամ Կառույցներ) կայուն համագործակցության համակարգ ստեղծելու, Մասնաճյուղի ուսանողների ապագա կարիերայի զարգացմանն ու նրանց մասնագիտական գործունեությանն աջակցելու ձևերն ու մեխանիզմները, ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող հանձնաժողովի աշխատակարգը: Ձեռնարկությունների հետ Մասնաճյուղի համագործակցության նպատակն է. ֆակուլտետների ներուժով ընդլայնել ՀՀ պետական, մասնավոր ընկերությունների և ձեռնարկությունների հետ համագործակցության շրջանակը,

ապահովել բազմակողմանի համագործակցություն, ներգրավվել ՀՀ և մարզի խնդիրների լուծման ծրագրերում, նպաստել մարզի զարգացմանն ու առաջընթացին և այդ համագործակցության շրջանակներում նպաստել ուսանողների մասնագիտական կարողությունների բարելավմանը, աջակցել նրանց նախաձեռնություններին, բիզնես գաղափարներին, ծրագրերին և կարիերային: Կանոնակարգը սահմանում է կառույցների հետ համագործակցության ապահովման, ամրապնդման և զարգացման համար իրականացվելիք քայլերի շրջանակը, ըստ որի պետք է մշակել համագործակցության ռազմավարություն, ստեղծել Գիտական խորհրդին կից Մասնաճյուղի և ձեռնարկությունների համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողով: Կարգում ներկայացված է հանձնաժողովի գործունեության կազմակերպումը, նախագահի, քարտուղարի և անդամների գործառույթները, հանձնաժողովի իրավունքներն ու պարտականությունները: Մ. Ճաղարյանը նշեց նաև, որ կարգով համագործակցության մեջ էական տեղ է հատկացվում մասնաճյուղի շրջանավարտներին: Առաջարկվում է ստեղծել «Շրջանավարտների միություն» ձեռնարկությունների հետ համագործակցության ընդլայման, աշխատանքների հասցեականության բարձրացման համար:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Ա. Մակարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք: Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ ֆակուլտետները նույնպես առաջնորդվում են նմանատիպ կարգով և ունեն նման հանձնաժողովներ, սակայն դեռ պարզ չէ, թե այնտեղ ինչ արդյունավետությամբ են գործում, մենք նույնպես պետք է կարգը գործարկենք:

Իսկ Գ. Սիմոնյանը առաջարկեց կարգի 8-րդ կետը՝ « 8.Հանձնաժողովի անդամների թիվը սահմանվում է գիտական խորհրդի կողմից այն տրամաբանությամբ, որ հանձնաժողովի կազմում ներգրավվելու են մասնաճյուղի ֆակուլտետների ներկայացուցիչներ և համագործակցող Կառույցների ներկայացուցիչներ, որոնք պետք է կազմեն հանձնաժողովի անդամների 1/3-ը» գրել հետևյալ կերպ՝ «8. Հանձնաժողովի անդամների թիվը սահմանվում է գիտական խորհրդի կողմից այն տրամաբանությամբ, որ հանձնաժողովի կազմում ներգրավվելու են մասնաճյուղի ֆակուլտետների ներկայացուցիչներ, մասնաճյուղի հաշվապահությունից ներկայացուցիչ և համագործակցող Կառույցների ներկայացուցիչներ, որոնք պետք է կազմեն հանձնաժողովի անդամների մինչև 1/3-ը:» Այնուհետև առաջարկվեց կարգը հաստատել նշված փոփոխություններով՝ համաձայն հավելված 6-ի:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 72/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և շահակից կառույցների համագործակցության ապահովման կանոնակարգը՝ համաձայն հավելված 6-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ընթացիկ հարցեր:

7.1.Լսեցին «ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Սիրանուշ Արտակի Աբազյանին ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերության նախագահի պաշտոնում հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ նախագահ **Ա. Թիրաբյանի** հաղորդումը։

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ Ա. Թիրաբյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ ըստ գործող կարգի անց է կացրել ՈՒԳԸ նախագահի նոր ընտրություններ, որտեղ նախագահ է ընտրվել ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Սիրանուշ Արտակի Աբազյանը, որը ունի բավարար պոտենցիալ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ աշխատանքները համակարգելու համար։

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 72/6

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով, 81-րդ կետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով ինչպես նաև ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ. հոկտեմբերի 28-ի թիվ 27 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերության կանոնադրության 3.14 կետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Սիրանուշ Արտակի Աբազյանին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության նախագահի պաշտոնում։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից։

7.2.Լսեցին «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի ծրագրերի ներկայացում» հարցի վերաբերյալ լսեցին «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի ծրագրերի համակարգողներ **Մ. Պետրոսյանի և Է.Գրիգորյանի** հաղորդումը։

Նշվեց, որ Տավուշի մարզի «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի նպատակն է մարզի՝ մասնավորապես Իջևան քաղաքի և հարակից գյուղերի բնակիչների համար կազմակերպել կրթական, մշակութային և տեղեկատվական միջոցառումներ, տարբեր թեմաների շուրջ ուսումնական կարճատև ծրագրեր և անգլերեն լեզվի անվճար դասընթացներ, որոնց շնորհիվ կզարգանան մասնակիցների սոցիալական և տեխնիկական հմտությունները, ինչպես նաև տեղի բնակչությունը կծանոթանա ամերիկյան արժեքներին, պատմությանը և մշակույթին։ «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի գործունեությունը ֆինանսավորվում է ԱՄՆ պետքարտուղարության հանրային դիվանագիտության գրասենյակի դրամաշնորհի շրջանակում և համակարգվում է «Փրոջեքթ Հարմոնի Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից։ Այնուհետև զեկուցողները մանրամասն ներկայացրեցին կատարված ծրագրերի (տես հավելված 7) և նպատակների մասին։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը և այլք։

Ա. Մակարյանը նշեց, որ այս տարի կենտրոնում սկսվելու են ևս երկու ծրագրեր, որոնք տևելու են երկու տարի, իսկ Մ. Օթարյանը նշեց, որ կենտրոնը հասել է իր նպատակին, որի մասին փաստում է կենտրոն դիմորդների թվի աճը։

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- ‹‹Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի ծրագրերի ներկայացում» հարցի վերաբերյալ **Ս. Պետրոսյանի և Է.Գրիգորյանի** հաղորդումներն ընդունել ի գիտություն**:**

<u>7.3. Լսեցին</u> ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. նոյեմբերի 26-ի նիստի թիվ 63/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը նոր խմբագրությամբ հաստատելու և մրցույթը մեկնարկելու մասին›› հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյանի** հաղորդումը։

Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում 2023թ. կայացած «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի վերլուծությունը ցույց տվեց գործող կարգում առկա բացթողումները, մասնավորապես, յուրաքանչյուր անվանակարգում մեկական դիմորդներով որոշվեցին 4 մրցանակակիրները, այդ իսկ պատճառով առաջարկվում է կարգում կատարել փոփոխություններ ավելի օբյեկտիվ մրցույթ ապահովելու համար։ Այնուհետև Ա. Մակարյանը առաջարկեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. նոյեմբերի 26-ի նիստի թիվ 63/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգում կատարել հետևյալ հիմնական փոփոխությունները.

«2. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ» մասում ավելացնել « 5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի հաղթող համարվում է այն անձը, ով վերոնշյալ 1-4 անվանակարգերում մրցանակակիր է ճանաչվել ամենաբարձր միավորներով» կետը։

18-րդ (19-րդ՝ խմբագրված կարգում) կետը ձևակերպել հետևյալ կերպ. «Մրցույթի անցկացման պայմանների և թեկնածուների առաջադրման մասին տեղեկատվությունը Հանձնաժողովը հայտարարում է մինչև ընթացիկ ուսումնական տարվա ապրիլի 1-ը (եղել է մինչև մարտի 1-ը)։ Թեկնածուների առաջադրումն իրականացվում է համապատասխան հայտերի միջոցով՝ էլեկտրոնային (առցանց) ձևաչափով (դիմում-հայտի ձևը հաստատվում է Հանձնաժողովի կողմից)»

«5.ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ» բաժնի 23 –րդ կետը ձևակերպել հետևյալ կերպ.

«24. 1-4 կետերով երեք մրցանակակիրներին տրվում է հավաստագիր և պարգևատրում 100 000 ՀՀ դրամի չափով, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, իսկ «ԵՊՀ ԻՄ լավագույն դասախոս» մրցանակակրին՝ հավաստագիր և պարգևատրում 300 000 ՀՀ դրամի չափով, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը», եղել է՝ «23.

Մրցանակակիրներին տրվում է հավաստագիր և պարգևատրում՝ 300 000 ՀՀ դրամի չափով, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը», ինչպես նաև ներկայացված փոփոխություններից բխող այլ խմբագրումներ։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Վ. Աղաբաբյանը, Գ. Սիմոնյանը, Ա. Դավթյանը և այլք։

Մասնավորապես Մ. Օթարյանը նշեց, որ գործող կարգում առկա Աղյուսակ 1-ի գնահատման չափանիշներում «Ուսումնական տարվա ընթացքում դասավանդվող դասընթացների համար ուսանողների գնահատականները»-ին հատկացվում է 20 միավոր, որը կարող է լինել ոչ օբյեկտիվ, կապված այն հանգամանքի հետ, որ ուսանողների մասնակցությունը որպես կանոն փոքր տոկոս է կազմում։ Եվ առաջարկեց Աղյուսակ 1-ի գնահատման չափանիշների մասնաբաժինները որոշել տնօրենի հրամանով առանց կարգում ամրագրելու։

Այնուհետև առաջարկվեց հաստատել խմբագրված կարգը առաջարկվող փոփոխություններով (տես հավելված 8)։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 72/7

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. նոյեմբերի 26-ի նիստի թիվ 63/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 8-ի։
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթը կազմակերպել և անցկացնել 2024թ. մարտի 23-ից։
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման և հրամանագրման պահից։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 72
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

16-ը մարտի 2024թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Ա. Հ. Մակարյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և նշեց, որ անհրաժեշտ է ավելացնել օրակարգում ավելացնել ևս մեկ հարց՝ «7.3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. նոյեմբերի 26-ի նիստի թիվ 63/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը նոր խմբագրությամբ հաստատելու և մրցույթը մեկնարկելու մասին» հարցը, որը, կապված է ԵՊՀ ԻՄ-ում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման անհրաժեշտությամբ: Այնուհետև Ա. Մակարյանը քվեարկության դրեց նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:

   (զեկ.՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյան**):
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2024թ. խնդիրների մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը հաստատելու մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան**)
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024-2025 ուստարվա ընդունելության ուսման վարձավճարների չափերը հաստատելու մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024-2025 ուստարվա ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների հաստատելու մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)
6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և կառույցների ու կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման» կարգը հաստատելու մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան**)

7. Ընթացիկ հարցեր։

7.1. ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Սիրանուշ Արտակի Աբազյանին ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական գիտական ընկերության նախագահի պաշտոնում հաստատելու մասին։

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ նախագահ **Ա. Թիրաբյան**)

7.2. «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի ծրագրերի ներկայացում։

(Զեկուցող՝ «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի ծրագրերի համակարգողներ **Ս. Պետրոսյան, Է.Գրիգորյան**)

7.3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. նոյեմբերի 26-ի նիստի թիվ 63/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը նոր խմբագրությամբ հաստատելու և մրցույթը մեկնարկելու մասին»

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**.

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը։

<u>Օրակարգի առաջին</u> **՝** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին » հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյանի** հաղորդումը։

Մ. Աթոյանը նշեց, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը կազմվել է հաշվի առնելով ԵՊՀ ԻՄ նախորդ տարվա ժամանակացույցը, ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագիրը, ընդգրկվել են նաև ստորաբաժանումների ղեկավարների և գիտական խորհրդի անդամների կողմից ներկայացված հարցեր՝ մասնավորապես առաջարկներ են ստացվել ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի կողմից։

Նիստերի ժամանակացույցը ամբողջական կարող եք տեսնել **հավելված 1-ում։**

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մակարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք։

Արտահայտվողները առաջարկեցին ներկայացված տարբերակով հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը։

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 72/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-

րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի երկրորդ՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2024թ. խնդիրների մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Նա մասնավորապես նշեց, որ ԵՊՀ ԻՄ զարգացման՝ 2022-2026 թթ. ռազմավարական ծրագրի 3 նպատակների 19 խնդիրների 101 գործողությունների իրականացման համար մշակվել է մարտավարություն, որը ներառել է շուրջ 307 նպատակային քայլեր՝ 325 ակնկալվող ցուցիչներով: Այնուհետև Ա. Մակարյանը անդրադարձավ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2024թ.-ին նախատեսված առանցքային խնդիրներին, թե որքանով են իրականացվել և ինչ խնդիրներ կան դրանց իրականացման ճանապարհին: Նա մանրամասն ներկայացրեց յուրաքանչյուր ռազմավարական նպատակում առկա առանցքային խնդիրները(տես հավելված 2) և նրանց լուծման հնարավորությունները:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք:

Արտահայտվողները կարևորեցին կատարված աշխատանքները, դրանց վերլուծությունները ԵՊՀ ԻՄ հետագա գործունեության արդյունավետության բարձրացման գործում:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ

- ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2024թ.-ի խնդիրների մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյանի** հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի երրորդ՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում ներկայացվել են 13 անվանական կրթաթոշակի հավակնորդներ, որից 11-ը ԵՊՀ ԻՄ բյուջեի հաշվին, իսկ 2-ը՝ արտաբյուջետային: Հարցը քննարկվել է նաև տնօրենության նիստում: Ֆակուլտետների գիտական խորհուրդներում քննարկվել են անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների թեկնածությունները: Արդյունքում, հաշվի առնելով ուսանողների առաջադիմությունը և ԵՊՀ ԻՄ գործող համապատասխան իրավական ակտերը ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն է

ներկայացվում 13 անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, որոնք համապատասխանում են պահանջվող չափանիշներին: Ցուցակը կարող եք տեսնել **հավելված 3-ում**:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, Գ. Սիմոնյանը, ուսանողներ և այլք: Առաջարկվեց հաստատել ներկայացված ցուցակը:

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 72/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 8-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 8-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, համաձայն հավելված 3-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

<u>Օրակարգի չորրորդ՝</u> ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024-2025 ուստարվա ընդունելության ուսման վարձավճարների չափերը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Ա. Մակարյանը նշեց, որ հարցը քննարկվել է նաև ԵՊՀ ԻՄ տնօրենության նիստում, և որոշվել է առաջարկել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին ոչ մեծ չափով (հիմնականում 20 հազար ՀՀ դրամի չափով) փոփոխություններ կատարել ԵՊՀ ԻՄ՝ 2024-2025 ուստարվա ուսման վճարների չափերում (տես հավելված 4): Ա. Մակարյանը նշեց, որ վարձավճարների չափերը ճիշտ որոշելու համար կատարվել են նաև համեմատություններ ՀՀ այլ բուհերի վարձավճարների հետ, որի արդյունքում պարզ է դարձել, որ ԵՊՀ ԻՄ վարձավճարների չափերը մնում են ՀՀ-ում ամենացածրերից՝ որոշ մասնագիտություններով Մասնաճյուղի վարձավճարներից ցածր է միայն Շիրակի պետական համալսարանի որոշ ծրագրերի վարձավճարները: Ա. Մակարյանը նշեց նաև, որ Մասնաճյուղը ձգտում է մոտենալ ՀՀ կառավարության կողմից սահմանված միջին ուսման վարձավճարներին: Այնուհետև նշվեց, որ վարձավճարներից ամենացածրը «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի համար է, իսկ ամենաբարձրը՝ «Ֆինանսներ(ըստ ոլորտների)» կրթական ծրագրի համար:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը:

Նշվեց, որ Մասնաճյուղի հիմնական եկամուտը վարձավճարներն են, իսկ որակյալ կրթություն մատուցելու համար անհրաժեշտ են բավարար դրամական միջոցներ: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը նշեց, օրակարգի հաջորդ հինգերորդ հարցը՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024-2025 ուստարվա ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների հաստատելու մասին», որը սերտ առնչվում է այս հարցի հետ և ճիշտ կլինի միացնել այս հարցին:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 72/3

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 3-րդ և 6-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 3-րդ և 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024-2025 ուստարվա ընդունելության ուսման վարձավճարների չափերի նախագիծը՝ համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՈՐՈՇՈՒՄ N 72/4

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 6-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2024-2025 ուստարվա ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների՝ համաձայն հավելված 5-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

<u>Օրակարգի վեցերորդ</u>՝ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և կառույցների ու կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման» կարգը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի հաղորդումը:

Մ. Ճաղարյանը նշեց, որ Մասնաճյուղի 2022-2026թթ. զարգացման ծրագրի Հ2.1 գործողությամբ (Նպատակ 3. Հանրային ներգրավվածություն, խնդիր 2. Համագործակցություն, գործողություն 1) պլանավորվել է մշակել ձեռնարկությունների հետ Մասնաճյուղի համագործակցության կարգ: ՄԿՈԱ բաժինը մշակել է կանոնակարգի նախագիծը, որը քննարկվել է Գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նիստում /31.10.2023թ./: Նա նշեց նաև, որ կանոնակարգը սահմանում է Մասնաճյուղի հետ ՀՀ-ում գործող պետական, մասնավոր և միջազգային ձեռնարկությունների, ընկերությունների ու կազմակերպությունների (այսուհետև՝ Շահակից կառույցնոր կամ Կառույցներ) կայուն համագործակցության համակարգ ստեղծելու, Մասնաճյուղի ուսանողների ապագա կարիերայի զարգացմանն ու նրանց մասնագիտական գործունեությանն աջակցելու ձևերն ու մեխանիզմները, ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող հանձնաժողովի աշխատակարգը: Ձեռնարկությունների հետ Մասնաճյուղի համագործակցության նպատակն է. ֆակուլտետների ներուժով ընդլայնել ՀՀ պետական, մասնավոր ընկերությունների և ձեռնարկությունների հետ համագործակցության շրջանակը,

ապահովել բազմակողմանի համագործակցություն, ներգրավվել ՀՀ և մարզի խնդիրների լուծման ծրագրերում, նպաստել մարզի զարգացմանն ու առաջընթացին և այդ համագործակցության շրջանակներում նպաստել ուսանողների մասնագիտական կարողությունների բարելավմանը, աջակցել նրանց նախաձեռնություններին, բիզնես գաղափարներին, ծրագրերին և կարիերային: Կանոնակարգը սահմանում է կառույցների հետ համագործակցության ապահովման, ամրապնդման և զարգացման համար իրականացվելիք քայլերի շրջանակը, ըստ որի պետք է մշակել համագործակցության ռազմավարություն, ստեղծել Գիտական խորհրդին կից Մասնաճյուղի և ձեռնարկությունների համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողով: Կարգում ներկայացված է հանձնաժողովի գործունեության կազմակերպումը, նախագահի, քարտուղարի և անդամների գործառույթները, հանձնաժողովի իրավունքներն ու պարտականությունները: Մ. Ճաղարյանը նշեց նաև, որ կարգով համագործակցության մեջ էական տեղ է հատկացվում մասնաճյուղի շրջանավարտներին: Առաջարկվում է ստեղծել «Շրջանավարտների միություն» ձեռնարկությունների հետ համագործակցության ընդլայման, աշխատանքների հասցեականության բարձրացման համար:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Ա. Մակարյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք: Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ ֆակուլտետները նույնպես առաջնորդվում են նմանատիպ կարգով և ունեն նման հանձնաժողովներ, սակայն դեռ պարզ չէ, թե այնտեղ ինչ արդյունավետությամբ են գործում, մենք նույնպես պետք է կարգը գործարկենք:

Իսկ Գ. Սիմոնյանը առաջարկեց կարգի 8-րդ կետը՝ « 8.Հանձնաժողովի անդամների թիվը սահմանվում է գիտական խորհրդի կողմից այն տրամաբանությամբ, որ հանձնաժողովի կազմում ներգրավվելու են մասնաճյուղի ֆակուլտետների ներկայացուցիչներ և համագործակցող Կառույցների ներկայացուցիչներ, որոնք պետք է կազմեն հանձնաժողովի անդամների 1/3-ը» գրել հետևյալ կերպ՝ «8. Հանձնաժողովի անդամների թիվը սահմանվում է գիտական խորհրդի կողմից այն տրամաբանությամբ, որ հանձնաժողովի կազմում ներգրավվելու են մասնաճյուղի ֆակուլտետների ներկայացուցիչներ, մասնաճյուղի հաշվապահությունից ներկայացուցիչ և համագործակցող Կառույցների ներկայացուցիչներ, որոնք պետք է կազմեն հանձնաժողովի անդամների մինչև 1/3-ը:» Այնուհետև առաջարկվեց կարգը հաստատել նշված փոփոխություններով՝ համաձայն հավելված 6-ի:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 72/5

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և շահակից կառույցների համագործակցության ապահովման կանոնակարգը՝ համաձայն հավելված 6-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ընթացիկ հարցեր:

7.1.Լսեցին «ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Սիրանուշ Արտակի Աբազյանին ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերության նախագահի պաշտոնում հաստատելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ նախագահ **Ա. Թիրաբյանի** հաղորդումը։

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ Ա. Թիրաբյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ ըստ գործող կարգի անց է կացրել ՈՒԳԸ նախագահի նոր ընտրություններ, որտեղ նախագահ է ընտրվել ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Սիրանուշ Արտակի Աբազյանը, որը ունի բավարար պոտենցիալ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ աշխատանքները համակարգելու համար։

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 72/6

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով, 81-րդ կետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով ինչպես նաև ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ. հոկտեմբերի 28-ի թիվ 27 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերության կանոնադրության 3.14 կետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Սիրանուշ Արտակի Աբազյանին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության նախագահի պաշտոնում։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից։

7.2.Լսեցին «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի ծրագրերի ներկայացում» հարցի վերաբերյալ լսեցին «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի ծրագրերի համակարգողներ **Մ. Պետրոսյանի և Է.Գրիգորյանի** հաղորդումը։

Նշվեց, որ Տավուշի մարզի «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի նպատակն է մարզի՝ մասնավորապես Իջևան քաղաքի և հարակից գյուղերի բնակիչների համար կազմակերպել կրթական, մշակութային և տեղեկատվական միջոցառումներ, տարբեր թեմաների շուրջ ուսումնական կարճատև ծրագրեր և անգլերեն լեզվի անվճար դասընթացներ, որոնց շնորհիվ կզարգանան մասնակիցների սոցիալական և տեխնիկական հմտությունները, ինչպես նաև տեղի բնակչությունը կծանոթանա ամերիկյան արժեքներին, պատմությանը և մշակույթին։ «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի գործունեությունը ֆինանսավորվում է ԱՄՆ պետքարտուղարության հանրային դիվանագիտության գրասենյակի դրամաշնորհի շրջանակում և համակարգվում է «Փրոջեքթ Հարմոնի Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից։ Այնուհետև զեկուցողները մանրամասն ներկայացրեցին կատարված ծրագրերի (տես հավելված 7) և նպատակների մասին։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը և այլք։

Ա. Մակարյանը նշեց, որ այս տարի կենտրոնում սկսվելու են ևս երկու ծրագրեր, որոնք տևելու են երկու տարի, իսկ Մ. Օթարյանը նշեց, որ կենտրոնը հասել է իր նպատակին, որի մասին փաստում է կենտրոն դիմորդների թվի աճը։

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- ‹‹Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի ծրագրերի ներկայացում» հարցի վերաբերյալ **Ս. Պետրոսյանի և Է.Գրիգորյանի** հաղորդումներն ընդունել ի գիտություն**:**

<u>7.3. Լսեցին</u> ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. նոյեմբերի 26-ի նիստի թիվ 63/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը նոր խմբագրությամբ հաստատելու և մրցույթը մեկնարկելու մասին›› հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյանի** հաղորդումը։

Ա. Մակարյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում 2023թ. կայացած «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի վերլուծությունը ցույց տվեց գործող կարգում առկա բացթողումները, մասնավորապես, յուրաքանչյուր անվանակարգում մեկական դիմորդներով որոշվեցին 4 մրցանակակիրները, այդ իսկ պատճառով առաջարկվում է կարգում կատարել փոփոխություններ ավելի օբյեկտիվ մրցույթ ապահովելու համար։ Այնուհետև Ա. Մակարյանը առաջարկեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. նոյեմբերի 26-ի նիստի թիվ 63/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգում կատարել հետևյալ հիմնական փոփոխությունները.

«2. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ» մասում ավելացնել « 5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի հաղթող համարվում է այն անձը, ով վերոնշյալ 1-4 անվանակարգերում մրցանակակիր է ճանաչվել ամենաբարձր միավորներով» կետը։

18-րդ (19-րդ՝ խմբագրված կարգում) կետը ձևակերպել հետևյալ կերպ. «Մրցույթի անցկացման պայմանների և թեկնածուների առաջադրման մասին տեղեկատվությունը Հանձնաժողովը հայտարարում է մինչև ընթացիկ ուսումնական տարվա ապրիլի 1-ը (եղել է մինչև մարտի 1-ը)։ Թեկնածուների առաջադրումն իրականացվում է համապատասխան հայտերի միջոցով՝ էլեկտրոնային (առցանց) ձևաչափով (դիմում-հայտի ձևը հաստատվում է Հանձնաժողովի կողմից)»

«5.ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ» բաժնի 23 –րդ կետը ձևակերպել հետևյալ կերպ.

«24. 1-4 կետերով երեք մրցանակակիրներին տրվում է հավաստագիր և պարգևատրում 100 000 ՀՀ դրամի չափով, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, իսկ «ԵՊՀ ԻՄ լավագույն դասախոս» մրցանակակրին՝ հավաստագիր և պարգևատրում 300 000 ՀՀ դրամի չափով, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը», եղել է՝ «23.

Մրցանակակիրներին տրվում է հավաստագիր և պարգևատրում՝ 300 000 ՀՀ դրամի չափով, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը», ինչպես նաև ներկայացված փոփոխություններից բխող այլ խմբագրումներ։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ փոխտնօրեն Մ. Օթարյանը, Վ. Աղաբաբյանը, Գ. Սիմոնյանը, Ա. Դավթյանը և այլք։

Մասնավորապես Մ. Օթարյանը նշեց, որ գործող կարգում առկա Աղյուսակ 1-ի գնահատման չափանիշներում «Ուսումնական տարվա ընթացքում դասավանդվող դասընթացների համար ուսանողների գնահատականները»-ին հատկացվում է 20 միավոր, որը կարող է լինել ոչ օբյեկտիվ, կապված այն հանգամանքի հետ, որ ուսանողների մասնակցությունը որպես կանոն փոքր տոկոս է կազմում։ Եվ առաջարկեց Աղյուսակ 1-ի գնահատման չափանիշների մասնաբաժինները որոշել տնօրենի հրամանով առանց կարգում ամրագրելու։

Այնուհետև առաջարկվեց հաստատել խմբագրված կարգը առաջարկվող փոփոխություններով (տես հավելված 8)։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 72/7

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2022թ. նոյեմբերի 26-ի նիստի թիվ 63/3 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 8-ի։
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթը կազմակերպել և անցկացնել 2024թ. մարտի 23-ից։
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման և հրամանագրման պահից։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ

Հավելված 1

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2024թ. մարտի 16-ի նիստի թիվ 72/1 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա

երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույց

Հ/հ	Հարց	ժամկետ	Պատասխանատու
1.	ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:	Մարտ	Մ. Ս. Աթոյան
2.	ԵՊՀ ԻՄ-ի 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը հաստատելու մասին:	Մարտ	Ա. Ց. Դավթյան
3.	ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2024թ. խնդիրների մասին:	Մարտ	Ա. Հ. Մակարյան
4.	ԵՊՀ ԻՄ-ի 2024-2025 ուստարվա ընդունելության ուսման վարձավճարների չափերը հաստատելու մասին:	Մարտ	Ա. Հ. Մակարյան
5.	ԵՊՀ ԻՄ-ի 2024-2025 ուստարվա ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների հաստատելու մասին:	Մարտ	Ա. Հ. Մակարյան

6.	ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին:	Ապրիլ	Մ. Ա. Ճաղարյան
7.	ԵՊՀ ԻՄ-ի 2024 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգի հաստատում:	Ապրիլ	Մ. Մ. Օթարյան
8.	ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ-ի 2023-2024 ուստարվա գործունեության մասին:	Հունիս	ՈՒԳԸ նախագահ
9.	Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2024թ. հարցման արդյունքների մասին:	Հունիս	Մ. Ա. Ճաղարյան
10.	ԵՊՀ ԻՄ-ի 2025-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում:	Հունիս	Ա. Հ. Մակարյան
11.	Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին:	Հունիս	Լ. Գ. Բեգինյան
12.	Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում:	Հունիս	Ն. Ս. Գրիգորյան
13.	ԵՊՀ ԻՄ-ի ստորաբաժանումների կանոնադրություն-ների, ներքին իրավական ակտերի հաստատում:	Մարտ-Հունիս	Ստորաբաժանում-ների ղեկավարներ
14.	Ընթացիկ հարցեր		

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի քարտուղար՝ _____Մ.Ս. Աթոյան

Հավելված 1

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2024թ. մարտի 16-ի նիստի թիվ 72/1 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա

երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույց

Հ/հ	Հարց	ժամկետ	Պատասխանատու
1.	ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:	Մարտ	Մ. Ս. Աթոյան
2.	ԵՊՀ ԻՄ-ի 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը հաստատելու մասին:	Մարտ	Ա. Ց. Դավթյան
3.	ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 2024թ. խնդիրների մասին:	Մարտ	Ա. Հ. Մակարյան
4.	ԵՊՀ ԻՄ-ի 2024-2025 ուստարվա ընդունելության ուսման վարձավճարների չափերը հաստատելու մասին:	Մարտ	Ա. Հ. Մակարյան
5.	ԵՊՀ ԻՄ-ի 2024-2025 ուստարվա ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կրեդիտների հաստատելու մասին:	Մարտ	Ա. Հ. Մակարյան

6.	ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին:	Ապրիլ	Մ. Ա. Ճաղարյան
7.	ԵՊՀ ԻՄ-ի 2024 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգի հաստատում:	Ապրիլ	Մ. Մ. Օթարյան
8.	ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ-ի 2023-2024 ուստարվա գործունեության մասին:	Հունիս	ՈՒԳԸ նախագահ
9.	Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2024թ. հարցման արդյունքների մասին:	Հունիս	Մ. Ա. Ճաղարյան
10.	ԵՊՀ ԻՄ-ի 2025-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում:	Հունիս	Ա. Հ. Մակարյան
11.	Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին:	Հունիս	Լ. Գ. Բեգինյան
12.	Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հաստատում:	Հունիս	Ն. Ս. Գրիգորյան
13.	ԵՊՀ ԻՄ-ի ստորաբաժանումների կանոնադրություն-ների, ներքին իրավական ակտերի հաստատում:	Մարտ-Հունիս	Ստորաբաժանում-ների ղեկավարներ
14.	Ընթացիկ հարցեր		

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի քարտուղար՝ _____Մ.Ս. Աթոյան

ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ 2024Թ.-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ



Նպատակ 1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



Նպատակ 2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ



Ռազմավարական նպատակ 1
ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 1. Ընդունելություն

- Դիմորդների մասնագիտական կոմնորոշան միջոցառումների կազմակերպում.
  - բաց դռների օրեր
  - կրթական ցուցահանդեսներ
  - ամառային դպրոցներ
- Նախապատրաստական դասընթացների կազմակերպում

Խնդիր 2. Մրցունակ կրթական ծրագրեր

- Բակալավրի և մագիստրոսի նոր ծրագրերի ներդնում,
- Կրթական ծրագրերի ինքնավերլուծության իրականացում



Ռազմավարական նպատակ 1
ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 3. Կրթական միջավայր

- Շենքային պայմանների բարելավում, ուսումնական և վարչական տարածքների արդիականացում,
- Համակարգչային և տեխնիկական ֆոնդի վերազինում,
- Միացում Միջազգային գրադարանային ցանցերին,
- Արտալսարանային գործունեության համար կահավորված հատուկ տարածքների ստեղծում,

Խնդիր 4. Բարձրորակ մարդկային ռեսուրսներ

- Դասախոսական կազմի վերապատրաստում՝ ուղղված հետազոտական կարողությունների զարգացմանը,
- Ուսումնաօժանդակ համակազմի վերապատրաստում,
- Մասնագիտական աճին նպաստող խրախուսման նոր ձևերի ներդնում,
- Անձնակազմի աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգի ներդնում,



Ռազմավարական նպատակ 1
ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 5. Միջազգայնացում և համագործակցություն

- Մասնաճյուղի ներգրավում միջազգային դրամաշնորհային ծրագրերում, անձնակազմի վերապատրաստում,
- Օտարերկրյա համալսարանների հետ համատեղ հետազոտությունների իրականացում

Խնդիր 6. Արդյունավետ կառավարում

- Էլեկտրոնային գործիքների ներդնում .

Մալբրի, e-request,

supervision, intranet,

moodle, registrar, ՀԾ

Ռազմավարական նպատակ 2
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Խնդիր 1. Կրթություն

- Գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացում

Խնդիր 2. Բարձրորակ մարդկային ռեսուրսներ

- Ուսանողական ամառային դպրոցների և ճամաբարների կազմակերպում,
- Դասախոսական կազմի վերապատրաստումներ՝ հոդված գրելու կարողությունների զարգացման համար,
- «Տարվա հետազոտող» մրցանակաբաշխության կազմակերպում,

Խնդիր 4. Արդյունավետ և անվտանգ միջավայր

- Հետազոտական գործունեությունը համակարգող համամասնաճյուղային կենտրոնի (ՀԳՀԿ) ստեղծում,
- Միջգիտակարգային հետազոտությունների իրականացում

Ռազմավարական նպատակ 2
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Խնդիր 5. Համագործակցություն

- ՀՀ Բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ նախագծերի իրականացում ,
- Ձեռնարկությունների հետ համագործակցութան ապահովում

Խնդիր 6. Միջազգային համագործակցության խթանում

- Արտերկրի համալսարանների, ինստիտուտների հետ համագործակցության ապահովում,
- Միջազգային տարբեր գիտակրթական հիմնադրամներով ֆինանսավորվող նախագծերում մասնաճյուղի դասախոսական կազմի ներգրավվածությանն աջակցություն և խրախուսում

Խնդիր 7. Կառավարում

- Գիտական արդյունքների առևտրայնացման ուղղված գործընթացների իրականացում

Ռազմավարական նպատակ 3
ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Խնդիր 1, 3. Լրացուցիչ կրթական ծրագրեր, ծառայություններ

- Լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում,
- Ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացում

Խնդիր 2. Համագործակցություն

- Ձեռնարկությունների հետ համագործակցության ընդհանուր համակարգի ձևավորում,
- «Շրջանավարտների միության» ստեղծում,
- Աշխատանքի տոնավաճառների կազմակերպում (գործատուների համար բաց դռների օրեր),
- Լրացուցիչ պրակտիկաների իրականացում

Խնդիր 4. Կայուն արտաքին կապեր և հանրային պատասխանատվություն

- Տարածաշրջանի հասարակական, կրթական, տնտեսական և մշակութային կառույցների հետ ծրագրերի իրականացում

Ռազմավարական նպատակ 3
ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Խնդիր 5. ԵՊՀ ԻՄ-ի վարկանիշի բարձրացում

- Մասնաճյուղի միջազգայնացմանն ուղղված գործընթացների իրականացում,
- Մասնաճյուղի ներկայացում միջազգային վարկանիշային համակարգերում,
- Եռալեզու կայքի գործարկում,
- Առևտրայնացման հնարավորությունների առաջնահերթությունների ձևակերպում, այդ ուղղություններով հնարավոր ծրագրերի մշակում և շահակիցների հետ իրականացում,
- Մարքեթինգային գործընթացների իրականացում և ակտիվացում,
- Միջազգայնացման բենչմարքինգի իրականացում և տարեկան գործողությունների պլանավորում:

ԵՊՀ ԻՄ 2022-2026թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<u>Ռազմավարությամբ սահմանված ցուցիչների համաձայն.</u>

- ✓ քանակական և որակական տվյալների հավաքագրում,
- ✓ ռազմավարական ծրագրի առաջընթացի պարբերական գնահատում,
- ✓ ռազմավարական ծրագրի կատարողականի գնահատում և զեկույցի կազմում:

Հավելված 2

ԵՊՀ ԻՄ-ի 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակում անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակ

№	Ա.Ա.Հ.	Կրթական ծրագիր	Կուրս	Կրթաթոշակի անվանումը
1.	Մելինե Մանվելի Բրուտյան	Դիզայն	2-րդ	Վազգեն Սարգսյան
2.	Սահակ Գեղամի Գուլակյան	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	3-րդ	Մոնթե Մելքոնյան
3.	Լիլիա Սմբատի Իսկանդարյան	Անգլերեն լեզու և գրականություն	4-րդ	ԵՊՀ
4.	Իննա Հրայրի Հարությունյան	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	4-րդ	Արտակ Ցուցուլյան
5.	Սվետլանա Կարենի Մելիքբեկյան	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	4-րդ	Լենտրուշ Գյոզալյան
6.	Լիլիա Արտավազդի Եղոյան	Անգլերեն լեզու և գրականություն	4-րդ	Շառլ Ազնավուր
7.	Ռոզա Հովսեփի Բաղրամյան	Հայոց լեզու և գրականություն	4-րդ	Գրիգոր Նարեկացի
8.	Սյուզաննա Հայկի Ավետիսյան	Հոգեբանություն	4-րդ	Դավիթ Անհաղթ
9.	Լիլիթ Դավիթի Գասպարյան	Զբոսաշրջություն	3-րդ	Սահակ Զորափորեցի
10.	Մարգարիտա Արմանի Առաքելյան	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	4-րդ	Շավարշ Մարգարյան
11.	Մերի Հրայրի Խուդավերդյան	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	3-րդ	Համլետ Կարայան
12.	Ալիսա Էդգարի Ոսկանյան	Դեկորատիվ-կիրառական արվեստ	4-րդ	Սպարտակ Սարգսյան
13.	Հասմիկ Կարենի Մարգարյան	Պատմություն	4-րդ	Մխիթար Գոշ

Հավելված 4 **ՑԱՆԿ**

ԵՊՀ ԻՄ-ի 2024/2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ **ԱՌԱԿԱ** ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԹԻՎԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ/ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ

Դասիչը (ծածկագիրը)	Մասնագիտությունը, /Կրթական ծրագիրը/	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ, (վճարովի)	Ուսման Վարձը /ՀՀ դրամ/
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**			
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	5	20	**420.000**
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**			
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	2	18	**440.000**
021201.00.6	**Դիզայն**			
021201.01.6	Դիզայն	2	18	**400.000**
021401.00.6	**Կիրառական արվեստ**			
021401.01.6	Դեկորատիվ-կիրառական արվեստ	3	17	**400.000**
022201.00.6	**Պատմություն**			
022201.01.6	Պատմություն	3	27	**400.000**
023101.00.6	**Հայոց լեզու և գրականություն**			
023101.01.6	Հայոց լեզու և գրականություն	4	16	**380.000**
023102.00.6	**Օտար լեզու և գրականություն**			
023102.02.6	Անգլերեն լեզու և գրականություն	4	31	**470.000**

023102.04.6	Ֆրանսերեն լեզու և գրականություն	2	8	**470.000**
031301.00.6	**Հոգեբանություն**			
031301.01.6	Հոգեբանություն	2	18	**420.000**
041201.00.6	**Ֆինանսներ**			
041201.01.6	Ֆինանսներ(ըստ ոլորտի)	5	35	**520.000**
061101.00.6	**Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**			
061101.02.6	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	10	25	**470.000**
101501.00.6	**Զբոսաշրջություն**			
101501.01.6	Զբոսաշրջություն	3	22	**450.000**

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ **ՀԵՌԱԿԱ** ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԹԻՎԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ/ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ

	Դասիչը (ծածկագիրը)	Մասնագիտությունը, /Կրթական ծրագիրը/	Հատկացվող տեղերը	Ուսման վարձը /ՀՀ դրամ/
1.	**011301.00.6**	**Ընդհանուր մանկավարժություն**	**20**	**340.000**
	011301.01.6	*Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*		
2.	**022201.00.6**	**Պատմություն**	**20**	**320.000**
	022201.01.6	*Պատմություն*		
3.	**031301.00.6**	**Հոգեբանություն**	**20**	**340.000**
	031301.01.6	*Հոգեբանություն*		
4.	**041201.00.6**	**Ֆինանսներ**	**30**	**420.000**
	041201.01.6	*Ֆինանսներ(ըստ ոլորտի)*		
5.	**101501.00.6**	**Զբոսաշրջություն**	**20**	**360.000**
	101501.01.6	*Զբոսաշրջություն*		

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ **ՀԵՌԱԿԱ** ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԹԻՎԸ՝ ԸՍՏ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ/ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ

	Դասիչը (ծածկագիրը)	Մասնագիտությունը, /Կրթական ծրագիրը/	Հատկացվող տեղերը	Ուսման վարձը /ՀՀ դրամ/
6.	**011301.00.7**	**Ընդհանուր մանկավարժություն**	**25**	**400.000**
	011301.04.7	*Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա*		
7.	**041301.00.7**	**Կառավարում**	**25**	**500.000**
	041301.04.7	*Գործարար վարչարարություն (կառավարում)*		